ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՄԱԿ ԵՏՀ)

Ռազմավարական բնապահպանական գնահատման
Արձանագրության կիրառման օժանդակ

ՊԱՐԶԵՑՎԱԾ

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Նյու Յորք և Ժնև, 2012թ.

Նշում

Այս հրատարակությունում օգտագործված սահմանումները և ներկայացված նյութերը չպետք է ընդունվեն որպես որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ վայրի կամ դրանց իրավասու իշխանությունների կամ դրանց սահմանների իրավական կարգավիճակի վերաբերյալ Միացյալ Ազգերի Կազմակերպության Քարտուղարության կարծիքների արտահայտություն:

Այս նյութն ընդամենը տեղեկատվական նշանակություն ունի և պաշտոնական իրավաբանական կամ այլ մասնագիտական խորհրդատվություն չի կարող համարվել: Հեղինակները պատասխանատվություն չեն կրում սույն ձեռնարկում ներկայացված տեղեկատվության հիման վրա նախաձեռնված գործողությունների համար:
Սույն ձեռնարկը հանրությանը ներկայացվում է «այնպես, ինչպես կա» սկզբունքով, առանց սահմանված կամ ենթադրվող երաշխիքների, այդ թվում՝ առանց սահմանափակումների, իրացնելիության, որոշակի նպատակների համապատասխանելիության և իրավական պարտավորությունների բավարարման երաշխիքների: Միացյալ ազգերի կազմակերպությունը մասնավորապես չի երաշխավորում կամ ապահովում սույն ձեռնարկի ճշգրտությունն ու ամբողջականությունը:

Հեղինակային իրավունք © Միացյալ ազգերի կազմակերպություն, 2012թ.:

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են: Սույն ձեռնարկում ներկայացված ոչ մի նյութ չի կարող օգտագործվել, վերարտադրվել էլեկտրոնային, մեխանիկական կամ որևէ այլ միջոցով փոխանցվել հատվածաբար կամ ամբողջությամբ, այդ թվում՝ պատճենահանմամբ, ձայնագրությամբ կամ տեղեկատվության պահպանման ու վերծանման որևէ համակարգի օգտագործմամբ՝ առանց սույն ձեռնարկին և ձեռնարկի հեղինակներին հղումներ կատարելու: Ձեռնարկը կազմելիս հեղինակներն օգտվել են մի շարք աղբյուրներից, որոնք հատուկ տրամադրվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրությունն ընդունած կողմերին, սակայն դրանք նաև կարող են օգտագործվել այլ շահագրգիռ անձանց կողմից, եթե ձեռնարկին և ձեռնարկի հեղինակային կազմին համապատասխան հղումներ կատարվեն:

Այս ձեռնարկը «Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրության կիրառման օժանդակ նյութատեխնիկական ձեռնարկի» (ECE/MP.EIA/17) պարզեցված, համառոտ տարբերակն է: Սույն ձեռնարկում, ինչպես նաև լիածավալ նյութատեխնիկական ձեռնարկում, ներկայացված արդյունքները, մեկնաբանություններն ու եզրակացությունները այդ ձեռնարկների կազմման աշխատանքներում ներգրավված ՄԱԿ-ի աշխատողների, ՄԱԿ-ի Քարտուղարության խորհրդատուների և խորհրդականների տեսակետներն են և չպետք է ընդունվեն որպես ՄԱԿ-ի կամ դրա անդամ երկրների պաշտոնական տեսակետներ: Այս նյութը պաշտոնական իրավաբանական կամ այլ մասնագիտական խորհրդատվություն չի կարող համարվել, սակայն ուղղորդում է տրամադրում Արձանագրության պահանջների կիրառման և այդ գործում այլոց աջակցման համար:

Սույն ձեռնարկը պատրաստվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կոնվենցիայի քարտուղարության կողմից՝Ավստրիայի, Ֆինլանդիայի, Նիդերլանդների, Եվրոպական Հանձնաժողովի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչներից բաղկացած խմբագրական թիմի օգնությամբ:

ECE/MP.EIA/18
ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ISSN 1020-4563

Բովանդակություն

ԳԼՈՒԽ 1
Ներածություն..... 5
1.1 Պարզեցված Ձեռնարկ 5
1.2 Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրություն..... 5
1.3 Ռազմավարական բնապահպանական գնահատում 5
ԳԼՈՒԽ 2
Ռազմավարական բնապահպանական գնահատման ընդգրկումը պլանի և ծրագրի կազմման գործընթացում. 7
2.1 Պլանի և ծրագրի կազմման գործընթաց, ՌԲԳ և նրանց կապերը..... 7
2.2 Պլանի և ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ ընդրկման գործնական նկատառումներ 8
ԳԼՈՒԽ 3
Պլանների և ծրագրերի գնահատման անհրաժեշտության որոշումը.....10
3.1 Հիմնական դրույթներ.....10
3.2 ՌԲԳ անհրաժեշտությունը որոշելու ուղեցույց.....10
ԳԼՈՒԽ 4
Պլանների և ծրագրերի գնահատում.....12
4.1 Շրջանակների որոշում..... 12
4.2 Բնապահպանական հաշվետվություն..... 14
4.3 Հանրության մասնակցություն..... 18
4.4 Խորհրդակցություն իրավասու մարմինների հետ 20
4.5 Անդրսահմանային խորհրդակցություններ..... .21
4.6 Որոշման կայացում..... 22
4.7 Մշտադիտարկում..... 23
ԳԼՈՒԽ 5
Քաղաքականություններ և օրենսդրություն..... .25
5.1 Հիմնական դրույթներ..... .25
5.2 Հնարավոր մոտեցումներ..... .25

Նկարների ցանկ

Նկար 1. Պլանի կամ ծրագրի կազմման և ՌԲԳ համապատասխան առաջադրանքներ.....8
Նկար 2. Արդյոք պլանը կամ ծրագիրը ենթակա են ՌԲԳ-ի.....11

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Շրջանակների որոշում.....12
Աղյուսակ 2. Համատեքստի և սկզբնական վիճակի վերլուծություն.....14

Աղյուսակ 3. Ներդրում պլանի կամ ծրագրի և դրանց այլընտրանքների մշակման գործընթացներում..... 15
Աղյուսակ 4. Բնապահապանական հաշվետվության պատրաստում..... 16
Աղյուսակ 5 Խորհրդակցություն.....17

ԳԼՈՒԽ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Պարզեցված նյութատեխնիկական ձեռնարկ

«Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրության կիրառման օժանդակ նյութատեխնիկական ձեռնարկի» (ECE/MP.EIA/17) այս պարզեցված, համառոտ տարբերակը մշակվել է Արձանագրությունն ընդունած երկրների համաժողովի 2011թ. հունիսի որոշման հիման վրա, որն ամրագրում է «Նյութատեխնիկական ձեռնարկի ամփոփ, պարզեցված և Արձանագրության պահանջների կիրառման գործնական հարցերին անդրադարձող տարբերակի մշակման» (ECE/MP.EIA/SEA/2, որոնշում թիվ I/3, պրբ. 5) պահանջ:

Պարզեցված ձեռնարկը լիածավալ Նյութատեխնիկական ձեռնարկի համառոտ տարբերակն է, որը ծառայում է որպես Արձանագրության և դրանով ամրագրված պահանջների կիրառման ներածություն: Պարզեցված ձեռնարկի նպատակն է՝ բարձրացնել Արձանագրության ու դրա դրույթների մասին իրազեկության մակարդակը և գործնական խորհուրդներ տրամադրել ռազմավարական բնապահպանական գնահատումների (ՌԲԳ) իրականացման համար: Արձանագրության և ՌԲԳ-ի մասին մանրակրկիտ տեղեկատվության համար հանձնարարվում է ծանոթանալ լիածավալ Ձեռնարկի բովանդակությանը:

1.2 Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրություն

«Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային (Էսպուի կոնվենցիային) առնընթեր ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրությունն ընդունվել է 2003թ. Կիևում: Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2010թ. հուլիսին և, 2012թ. սկզբի դրությամբ, Արձանագրությանն անդամակցում են 22 պետություններ և Եվրամիությունը[1]:

Արձանագրությունը սահմանում է որոշակի պլանների, ծրագրերի և, համապատասխան դեպքերում, քաղաքականությունների և օրենքների մշակման շրջանակներում ՌԲԳ իրականացնելու իրավական պահանջ: Պահանջը գործում է անկախ նրանից, թե տվյալ պլանները կամ ծրագրերը մեկ այլ երկրի տարածքի վրա ազդեցություն կարող են գործել, թե ոչ:

1.3 Ռազմավարական բնապահպանական գնահատում (ՌԲԳ)

ՌԲԳ-ն ընդհանուր առմամբ հասկացվում է որպես կանխարգելիչ բնույթի համակարգված գործընթաց, որի միջոցով կատարվում է շրջակա միջավայրի վերաբերյալ առաջարկվող նախագծերի, պլանների, ծրագրերի կամ այլ ռազմավարական գործողությունների ազդեցության վերլուծություն և ստացված արդյունքներն ու եզրահանգումներն ընդգրկվում են որոշումների կայացման գործընթացում:

Սույն պարզեցված Ձեռնարկում «ՌԲԳ» տերմինն օգտագործվում է ՌԲԳ Արձանագրությունում ամրագրված սահմանմանը համահունչ իմաստով, այն է՝

[1] Տարբեր երկրների կողմից վավերացման կարգավիճակի մասին պարբերաբար թարմացվող տեղեկատվություն կարելի գտնել ԵՏԳ կայքի Արձանագրությանը նվիրվա կայքէջերում (http://www.unece.org/env/eia/sea_protocol.html).

Ծրագրվող աշխատանքների հնարավոր բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական ազդեցության գնահատում, որի միջոցով սահմանվում են բնապահպանական հաշվետվության բովանդակության և նախապատրաստման շրջանակները, հանրության մասնակցության և հանրային խորհրդակցության կազմակերպումը և իրականացվելիք պլանում կամ ծրագրում բնապահպանական հաշվետվության, հանրության մասնակցության ու հանրային խորհրդակցությունների արդյունքների ընդգրկումը (հոդված 2, պարբերություն 6):

ԳԼՈՒԽ 2

ՌԲԳ-ի ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

2.1 ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ, ՌԲԳ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի ընդգրկման նպատակն է՝ այդ գործընթացի սկզբնական փուլերում ապահովել արդյունավետ միջոցների և տեղեկատվության ընդգրկում՝հետևելով, որ պլանների կամ ծրագրերի մշակման ընթացքում բնապահպանական նկատառումները լիաժեք կերպով հաշվի են առնվեն (Արձանագրություն, հոդված 1 (ա))։ ՌԲԳ պետք է մեկնարկի պլանի կամ ծրագրի նախագծի ձևակերպումից առաջ, եթե այն համապատասխանում է Արձանագրության պահանջներին։

Որպեսզի ՌԲԳ լինի պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վրա ազդող ուղղորդող/խթանիչ գործիք՝ անհրաժեշտ է Արձանագրությունում նկարագրված գործընթացը ընդգրկել կամ շաղկապել պլանի և ծրագրի հիմնական առաջադրանքներին։ Պլանների և ծրագրերի կազմման ընթացքում ՌԲԳ-ի իրականացումը սահմանվում է Արձանագրության 6-12 հոդվածներում։ Նշված հոդվածներում սահմանված տարրերը սովորաբար կարելի է շաղկապել պլանի և ծրագրի համապատասխան առաջադրանքներին, ինչպես ներկայացված է ստորև բերվող Նկար 1-ում, չնայած նրան, որ բազմաթիվ դեպքերում պլանների և ծրագրերի կազմումը առաջադրանքների նման հստակ հաջորդականություն չի նախատեսում։

Նկար 1.



Նշում. հանրության մասնակցությունը, պատասխանատու մարմինների և անդրսահմանային խորհրդակցությունները լիարժեք ձևով ներկայացված չեն այս պարզեցված գծապատկերում

2.2. ՊԼԱՆԻ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՌԲԳ-ի ԸՆԴԳՐԿՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Պլանների ու ծրագրերի կազմման գործընթացներում ՌԲԳ-ի ընդգրկումը բխում է գործնական նկատառումներից, որոնք պլանների կամ ծրագրերի մշակման վաղ փուլերում արդյունավետ կերպով ՌԲԳ-ի կիրառման իրավական պարտականությունների շրջանակներից դուրս են:

Ընդհանուր առմամբ, ՌԲԳ պետք է՝

- ընդգրկվի պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում և համապատասխանի դրա ներքին տրամաբանությանը
- **պետք է կիրառվի որոշումների կայացման հնարավորինս վաղ փուլում**, երբ այլընտրանքային տարբերակները դեռևս կարող են հաշվի առնվել և քննարկվել:
- **Պլանների և ծրագրերի կազմման գործընթացում հաշվի առնի բնապահապանական խնդիրները:** Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում բնապահապանական խնդիրների ներառմանը նպաստելու ՌԲԳ հնարավորությունը կախված է ժամանակացույցից և պլանում կամ ծրագրում ՌԲԳ ընդգրկման ձևաչափից:.
- **Գնահատի այլընտրանքների բավականին լայն, սակայն ողջամիտ շրջանակ**, որը կտատանվի որոշումների կայացման փուլերից: Չնայած չի պահանջվում Արձանագրությամբ, ՌԲԳ պետք է հնարավորության սահմաններում հաստատի շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից լավագույն իրագործելի տարբերակը:
- Գլխավոր շահառուների և հանրության մասնակցության հնարավորություններ ընձեռի և աջակցի տարբերվող, համընկնող կամ մասնակիորեն համընկնող տեսակետների և շահերի վերհանմանը: Վերջինս կարող է նպաստել արդյունավետ քննարկումների անցկացմանը և շահառուների միջև փոխվստահելիության մթոլորտի ձևավորմանը:
- **Կենտրոնանա** պլանի կամ ծրագրի կազմման համապատասխան փուլի **կարևորագույն խնդիրների շուրջ**, ինչի շնորհիվ գործընթացը կլինի առավել ծախսարդյունավետ, վստահելի և հաստատված ժամանակացույցին համապատասխան: Արձանագրության պահանջների կիրառումը սահմանում է որոշակի ժամանակային սահմանափակումներ, որոնք կարող են նվազագույնի հասցվել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի կազմակերպման արդյունքում: Լրացուցիչ ծախսեր կարող են տնտեսվել, եթե ՌԲԳ իրականացվում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացին զուգահեռ և հիմնվում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում իրականացվող տվյալների հավաքման, վերլուծությունների և խորհրդակցությունների արդյունքների վրա:

Վերևում բերվող նկարագրությունը ցույց է տալիս, թե որքան կարևոր է պլանի կամ ծրագրի կազմման հետ ՌԲԳ-ի ճիշտ կոորդինացումը: ՌԲԳ գործընթացը կարող է իրականացվել պլանի կամ ծրագրի մշակմանը զուգահեռ, կամ էլ ՌԲԳ և պլանի փորձագետները կարող են աշխատել միասին՝ որպես պլան կամ ծրագիր կազմող մեկ թիմի մաս: Երկու դեպքում էլ ՌԲԳ-ի ընդգրկումը պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ապահովում է մի շարք առավելություններ, ինչպիսիք են խնայված միջոցները և ձգձգումների հավանականության նվազեցումը: Նման մոտեցումը թույլ է տալիս ՌԲԳ և պլանավորման թիմերին հաճախակի խորհրդակցել միմյանց հետ, որի արդյունքում տաբեր տեսակետները հաշվի են առնվում վաղ փուլերում՝ նվազեցնելով ապագա անակնկալների և հնարավոր վեճերի ռիսկերը: Համապատասխան եզրակացության դեպքում, խորհրդակցություններ կարող են կազմակերպվել նաև համապատասխան բնապահպանական և առողջապահական մարմինների և հանրության հետ:

ԳԼՈՒԽ 3

Պլանների և ծրագրերի գնահատման անհրաժեշտության որոշումը

3.1 Հիմնական դրույթներ

Մինչև Արձանագրությամբ ՌԲԳ-ի անհրաժեշտության որոշումը, հարկ է առաջին հերթին որոշել, թե արդյոք դիտարկվող պլանը կամ ծրագիրը համապատասխանում է Արձանագրությամբ տրված պլանի կամ ծրագրի սահմանմանը: Պլանները և ծրագրերը պետք է "սահմանվեն օրենսդրական, կարգավորող կամ վարչարարական դրույթներով" և "պատրաստված լինեն և/կամ ենթակա լինեն իրավասու մարմնի կողմից հաստատման, կամ էլ պատրաստված լինեն իրավասու մարմնի կողմից և ֆորմալ ընթացակարգով հաստատվեն պառլամենտի կամ կառավարության կողմից" (Հոդված 2, պրբ. 5).

Երկրորդ, անհրաժեշտ է որոշել, թե արդյոք պլանը կամ ծրագիրը Արձանագրության Կիրառույթի շրջանակներում է, հաշվի առնելով Հոդված 4, պրբ. 2-ի և Հավելվածներ I և II նշված չափանիշները: Բացի այդ, ՌԲԳ պահանջվում է նաև այն պլանների կամ ծրագրերի համար (բացառությամբ պարբերություն 2-ի պահանջներին ենթակա պլանների ու ծրագրերի), որոնք ստուգազննման արդյունքների հիման վրա հետագա աշխատանքների բովանդակության շրջանակ են սահմանում (Հոդված 4, պրբ. 3): Այնուամենայնիվ, եթե տվյալ պլանը կամ ծրագիրը որոշում է **տեղական մակարդակում փոքր տարածքի օգտագործումը** կամ պլանի կամ ծրագրի **աննշան փոփոխություն** է ենթադրում (հոդված 4, պրբ. 4), ապա ՌԲԳ իրականացնելու պահանջը գործում է միայն այն դեպքում, եթե դա որոշվում է Ստուգազննմամբ: Այն պլանները և ծրագրերը, որոնց միակ նպատակը ազգային պաշտպանությունն է կամ քաղաքացիական արտակարգ իրավիճակների կարգավորումը, ենթակա չեն ՌԲԳ-ի: Նույնը վերաբերում է նաև ֆինանսական կամ բյուջետային պլաններին կամ ծրագրերին (հոդված 4, պրբ. 5).

Նշանակալի ազդեցությունների որոշումը (Ստուգազննում) կարող է իրականացվել առանձին դեպքերի զննման միջոցով, առանձնացնելով պլանների կամ ծրարգրերի տեսակները (օրինակ՝ նշելով այն պլանների և ծրարգրերի տեսակները, որոնց համար պահանջվում է ՌԲԳ) կամ էլ երկու մոտեցումների համատեղման միջոցով (հոդված 5, պրբ. 1): Անհրաժեշտ է խորհրդակցել համապատասխան բնապահպանական և առողջապահական մարմինների հետ նշանակալի ազդեցությունների հայտնաբերման դեպքում (հոդված 5, պրբ. 2), հանրությանը նույնպես պետք է մասնակցության հնարավորություն ընձեռվի participate (հոդված 5, պրբ. 3):

Պատասխանատու մարմինները պարտավոր են հանրությանը ծանուցել պլանների և ծրագրերի տեսակների ցուցակների կազմման, կամ էլ առանձին դեպքերի զննման ընթացքում հայտնաբերված նշանակալի ազդեցությունների դեպքերի մասին (հոդված 5, պրբ. 4): Ներկայացվող տեղեկատվության շրջանակներում պետք է ամփոփված լինեն համապատասխանության թեսթի արդյունքները, այսինքն՝ արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը կամ պլանի կամ ծրագրի տեսակները ենթակա են ՌԲԳ-ի, թե ոչ, ինչպես նաև՝ ՌԲԳ իրականացնելու անհրաժեշտության բացակայության պնդման դեպքում հարկավոր է ներկայացնել համապատասխան հիմնավորումները:

3.2 Պլանը կամ ծրագիրն Արձանագրության շրջանակներում ՌԲԳ-ի ենթարկելու որոշում կայացնելու ուղեցույց

Նկար 2-ում ցույց է տրվում, թե արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը ՌԲԳ-ի ենթակա է: Նկարում 9 հարց է տրվում, որոնք Արձանագրության կիրառույթի շրջանակներում են (հոդված 2, պրբ. 5 և

հոդված 4)։ 10-րդ հարցը (նշանակալի ազդեցությունների գնահատումը, հոդված 5) կարող է անհրաժեշտ լինել որոշելու համար, թե արդյոք պլանը կամ ծրագիրը ստուգազննման արդյունքների հիման վրա ենթակա է ՌԲԳ-ի, թե ոչ:

Նկար 2. Արդյոք պլանը կամ ծրագիրը ենթակա է ՌԲԳ-ի



ԳԼՈՒԽ 4

Պլանների և ծրագրերի գնահատում

Այս գլուխը ներկայացնում է ՌԲԳ պլանում կամ ծրագրում ընդգրկելու գործնական մոտեցումների նկարագիրը՝ համաձայն Արձանագրության դրույթների:

.

4.1 Շրջանակների որոշում

Շրջանակների որոշումը (Արձանագրության հոդված 6) կարող է համարվել ՌԲԳ գործընթացի առանձին տարր, կամ էլ բնապահպանական հաշվետվության պատրաստման առաջին քայլ: Անկախ ընտրված մոտեցումից՝ շրջանակների որոշումը և բնապահպանական հաշվետվության պատրաստումը նախընտրելի է, որ լինեն կրկնողական գործընթացներ:

Հիմնական դրույթներ

Շրջանակների որոշումը սահմանում է, թե ինչ թեմաներ են քննարկման ենթակա և թե յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ տեղեկատվությունն ինչ խորությամբ և մանրամասնությամբ պետք է ներկայացվի: Բնապահպանական զեկույցում ընդգրկված տեղեկատվությունը պետք է լինի **համապատասխան** (հոդված 6, պրբ 1), հոդված 7, պրբ 2-ում ամրագրված **չափանիշների** համաձայն՝ բնապահպանության և առողջապահության մարմինները պետք է մասնակցեն շրջանակների որոշման փուլում կազմակերպվող խորհրդակցություններին (հոդված 6, պրբ 2), և հանրությանը պետք է այս գործընթացում մասնակցության հնարավորություն ընձեռվի (հոդված 6, պրբ 3):

Շրջանակների որոշում

Շրջանակների որոշումը ՌԲԳ գործընթացի առաջին քայլն է, որը պետք է իրականացվի ՌԲԳ-ի ենթակա պլանի կամ ծրագրի վերաբերմամբ: Ստորև բերվող Աղյուսակ 1-ում նշվում է լավագույն գործելաոճի համար անհրաժեշտ պարտադիր և լրացուցիչ՝ ոչ պարտադիր առաջադրանքների ցանկը: Հարկ է նշել, որ պարտադիր առաջադրանքները համարվում են այդպիսին ՌԲԳ շրջանակներում՝ Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների կատարման տեսանկյունից, սակայն դրանք կարող են չհամարվել պարտադիր նշված փուլերից մեկում: Հարկ է նշել, որ Արձանագրության պահանջները բավարարելու համար պարտադիր համարվող առաջադրանքները պարտադիր են ՌԲԳ-ի ողջ գործընթացի համար և ոչ թե նշված առանձին բաղադրիչների համար:

Աղյուսակ 1

Շրջանակների որոշումը

Գործընթացային/պարտադիր առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
• Որոշել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շրջանակը (հոդված 7.1) o Նկարագրել պլանի կամ ծրագրի բովանդակությունը (Հավելված IV, պրբ1) o Սահմանել պլանի կամ ծրագրի հիմնական նպատակները (Հավելված IV, պրբ1) o Առանձնացնել նախատեսվող աշխատանքներին առնչվող բոլոր այլ պլաններն ու ծրագրերը և բացատրել, թե դրանք նախատեսվող պլանի կամ ծրագրի հետ ինչպես են հարաբերվում (Հավելված IV, պրբ 1) o Հավաքել տվյալ պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական, խնդիրների	• Սահմանել համապատասխան քաղաքականությունները և բացատրել, թե նախատեսվող պլանը կամ ծրագիրն ինչպես է հարաբերվում դրանց • Առանձնացնել գնահատման ենթակա հնարավոր ազդեցությունները • Սահմանել գործընթացում ընդգրկվելիք հանրության հատվածները, այդ թվում՝ համապատասխան հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները),(հոդված 8.3) • Կազմակերպել հանրության մասնակցությունը,

վերաբերյալ տեղեկատվություն (Հավելված IV, պրբ 4) o Սահմանել տվյալ պլանի կամ ծրագրի բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական, նպատակները (Հավելված IV, պրբ 5), վերլուծել, թե դրանք ինչպես են առնչվում պլանի կամ ծրագրի նպատակներին o Ներկայացնել ընտրված տարբերակի հիմնավորումը (Հավելված IV, պրբ 8) • Հաստատել բնապահպանական և առողջապահական մարմինների ցուցակը, որոնք պետք է ներգրավվեն խորհրդակցություններում (հոդված 9.1) • Համապատասխան մարմինների հետ խորհրդակցել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շուրջ (հոդված 6.2)	որոշել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շրջանակը (հոդված. 6.3) • Համապատասխան դեպքերում ծանուցել նախատեսվող աշխատանքներից տուժող կողմերին և խորհրդակցել նրանց հետ

Շրջանակների որոշման, շրջանակագրման միջոցով բացահայտվում և որոշվում են գնահատման բնապահպանական զեկույցում ընդգրկման ենթակա կարևոր խնդիրները: սահմանվում է ուսումնասիրման ենթակա հարցերի շարքը: Օրինակ, նշված խնդրին կարող է առնչվել աշխարհագրական տարածքի, ժամանակահատվածների և բնապահպանական հարցերի որոշումն ու առանձնացումը: Նման հարցերի բացահայտման համար կարող է նաև անհրաժեշտ լինել հստակեցնել պլանի կամ ծրագրի նպատակները, համապատասխան բնապահպանական խնդիրները և նպատակները, նաև թե ինչպես են այլ պլաններն ու ծրագրերը առնչվում տվյալ պլանի կամ ծրագրի նպատակներին: Ավելին, նախընտրելի է, որ այլընտրանքային տարբերակների որոշումը սկսվի արդեն այս փուլում:

Շրջանակների որոշման փուլում, որպես կանոն, մտահոգությունների երկար ցուցակից ընտրվում է շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների առավել համառոտ ցանկ: Շրջանակների որոշման մեթոդները բազմաթիվ են, ներառելով՝

- քաղաքականությունների և օրենքների գնահատումներ, որոնք օգնում են նախատեսվող պլանին կամ ծրագրին վերաբերող բնապահպանական և առողջապահական նպատակների ու թիրախների սահմանման գործում,
- հավաքական փորձագիտական եզրակացություններ, որոնք անձնական փորձի կամ դեպքերի համեմատության հիման վրա կարող են որոշել այն հնարավոր ազդեցությունները, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ ՌԲԳ շրջանակներում,
- Ստուգացուցակներ, որոնց միջոցով հեշտությամբ կարելի է որոշել, թե արդյոք տվյալ խնդիրներն առնչվում են նախատեսվող պլանին կամ ծրագրին, թե ոչ և խուսափել հնարավոր խնդիրներն անտեսելուց:

Շրջանակների որոշումը ներառում է խորհրդակցումը իրավասու մարմինների հետ, ոչ պարտադիր կարգով՝ հանրային մասնակցությունը: Եթե հավանական են զգալի անդրսահմանային ազդեցությունները, ցանկալի է ոչ ֆորմալ անդրսահմանային խորհրդակցություններ սկսել շրջանակների որոշման փուլում՝ գործընթացն ուղղորդելու համար: Ստորև նշվող հատվածներ 4.3, 4.4 և 4.5 տեղեկատվություն են տրամադրում թե համապատասխան դեպքերում դրանք ինչպես պետք է կազմակերպվեն: Արձանագրությունում շրջանակների որոշման հաշվետվություն ներկայացնելու պահանջ չկա: Սակայն ամեն դեպքում կարող է օգտավետ լինել գրանցել շրջանակների որոշման արդյունքները, որը կարող է բնապահպանական հաշվետվությունը կազմելիս ընդհանուր ներկայացնել, թե ինչ պետք է կատարվի: Իրավասու մարմինները կարող են որոշել շրջանակների որոշման հաշվետվությունը հասանելի դարձնել հանրությանը որպես լավագույն պրակտիկայի դրևորում: Անհրաժեշտություն չկա շրջանակների որոշումը վարչարարական կերպով տարանջատել բնապահպանական զեկույցի/հաշվետվության պատրաստումից: Բայցևայնպես, միշտ պահանջվելու են բնապահպանական զեկույցի շրջանակների որոշման շուրջ խորհրդակցություններն իրավասու մարմինների հետ: **Հաշվետվության պատրաստմանը շրջանակների որոշման ինտեգրումը և պատրաստումից հետո իրավասու մարմինների հետ խորհրդակցումը բավարար չէ:**

4.2 Բնապահպանական հաշվետվություն/զեկույց

Այս հատվածը ներկայացնում է շրջանակների որոշման ավարտից հետո Արձանագրության դրույթներին համաձայն ՌԲԳ-ի բնապահպանական հաշվետվության պատրաստման նկարագիրը: Այնուամենայնիվ, ինչպես նշվել է վերևում, շրջանակների որոշումը և հաշվետվության պատրաստումը նախընտրելի է, որ լինեն կրկնողական, կրկնվող գործընթացներ, որոնք բաղակացած են հետևյալ քայլերից՝

- Շրջանակների որոշում (տե՛ս հատված 4.1 վերևում)
- Համատեքստի և սկզբնական վիճակի վերլուծություն
- Պլանի կամ ծրագրի կամ դրանց խելամիտ այլընտրանքների կազմում
- Բնապահպանական հաշվետվության կազմում
- Խորհրդակցում

Հիմնական դրույթներ

Բնապահպանական հաշվետվությունը պետք է կազմվի ՌԲԳ-ի ենթակա պլանների և ծրագրերի համար (հոդված 7): Այն ներառում է խորհրդակցություններ իրավասու մարմինների հետ, հանրային մասնակցությունը հնարավոր է նաև անդրսահմանային ծանուցում և խորհրդակցություններ:

Բնապահպանական հաշվետվությունը պետք է բացահայտի, նկարագրի և գնահատի հնարավոր բնապահպանական, այդ թվում նաև՝ առողջապահական զգալի ազդեցությունները պլանի կամ ծրագրի և դրանց խելամիտ այլընտրանքների իրականացման դեպքում (հոդված 7, պրբ. 2): Այդ հաշվետվությունը պետք է օգտագործվի որոշում կայացնողների կողմից և պետք է նկարագրի մշտադիտարկման ռեժիմը: Հաշվետվության բովանդակությունը կարտացոլի շրջանակների որոշման արդյունքը (հոդված 6), սակայն կհիմնվի Արձանագրության Հավելված IV-ում նշված ցուցակի վրա և հաշվի կառնի հատուկ նշված 4 չափանիշները (հոդված 7, պրբ. 2): Եվ վերջապես, բնապահպանական հաշվետվությունը պետք է ունենա բավարար որակ, որպեսզի համապատասխանի Արձանագրության պահանջներին (հոդված 7, պրբ. 3):

Համատեքստի և սկզբնական վիճակի վերլուծություն

Աղյուսակ 2 Համատեքստի և սկզբնական վիճակի վերլուծություն

Գործընթացային/պարտադիր առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
• Հավաքել տեղեկատվություն շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության ներկա վիճակի և նախատեսվող պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում դրանց հնարավոր զարգացումների մասին (Հավելված IV, պրբ 2), • հավաքել տեղեկատվություն ազդեցության ենթարկվող տարածքներում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական վիճակի և հետևանքների վերաբերյալ (Հավելված IV, պարբերություն 3):	• իրավասու մարմինների հետ խորհրդակցել և կազմակերպել հանրության մասնակցությունը համատեքստի, նպատակների և նախնական վիճակի հարցերի շուրջ, • ըստ անհրաժեշտության, ոչ պաշտոնական ծանուցում տալ ազդեցության ենթարկվող (ազդակիր) կողմերին և խորհրդակցել նրանց հետ, • նկարագրել իրավասու մարմինների և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հաստատման մեթոդաբանությունը, • գնահատել հավաքված տեղեկատվության որակը և արդիականությունը

Սկզբնական վիճակի վերլուծության նպատակը պլանի կամ ծրագրի ազդեցությունների գնահատման ելակետի սահմանումն է: Աղյուսակ 2 ներկայացնում է լավագույն պրակտիկային

համապատասխանող պարտադիր և լրացուցիչ՝ ոչ պարտադիր առաջադրանքների ցանկը: Բնականաբար, այն ընդգրկում է շրջակա միջավայրի ներկա վիճակի նկարագիրը և ներկայացնում է հնարավոր զարգացումները պլանի կամ ծրագրի չիրականացման դեպքում: Սկզբնական վիճակի վերլուծությունը հիմնվում է առկա տվյալների վրա: Տվյալները հավաքելու բազմաթիվ մեթոդներ կան, որոնցից են՝

- տեղի շրջակա միջավայրի որակի ուսումնասիրությունները, որոնք սակայն իրատեսորեն կարող են կիրառվել միայն շատ կոնկրետ տեղական պլանների և ծրագրերի ՌԲԳ-ների դեպքում,
- պլանի կամ ծրագրի իրականացման ընթացքում պատրաստվող՝ բնապահպանական քաղաքականության նպատակների իրականացման և չափանիշների բավարարման մասին ընթացիկ հաշվետվությունները կարող են պատկերացում տալ արդեն իսկ սահմանված բնապահպանական նպատակների ու թիրախների բավարարման խոչընդոտների կամ ձեռքբերումների մասին:

Ներդրում պլանի կամ ծրագրի կամ դրանց այլընտրանքային տարբերակների մշակման գործընթացներում

Աղյուսակ 3

Ներդրում պլանի կամ ծրագրի կամ դրանց այլընտրանքային տարբերակների մշակման գործընթացներում

Գործընթացային/պարտադիր առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
• Նկարագրել, թե շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական նպատակները և այլ բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական նկատառումները ինչ ձևով են հաշվի առնվել նախատեսվող պլանի կամ ծրագրի, այդ թվում՝ դրա այլընտրանքային տարբերակների մշակման ժամանակ (Հավելված IV, պարբերություն 5), • գնահատել այլընտրանքային տարբերակները՝ առանձնացնելով, նկարագրելով և գնահատելով (մեթոդների մասին տես Գլուխ Ա5-ը) շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա նշանակալի հնարավոր ազդեցությունները (հոդված 7, պրբ. 2 և Հավելված IV, պրբ 6 և 10) • նկարագրել գնահատման, մեթոդաբանությունները (Հավելված IV, պրբ 8) • առաջարկել շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա նշանակալի հնարավոր ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ մեղմելու միջոցառումներ (Հավելված IV, պրբ 7)	• Առաջարկել բնապահպանական օգուտներն առավելագույնի հասցնելու միջոցներ, • աջակցել այլընտրանքային տարբերակների մշակմանը՝ փորձելով առավելագույնի հասցնել բնապահպանական նպատակների կատարման գործում պլանի կամ ծրագրի ներդրումը և հաշվի առնել այլ բնապահպանական նկատառումներ, այդ թվում՝ բացասական հետևանքները, • արձանագրել մշակված այլընտրանքային տարբերակները, • ըստ անհրաժեշտության, այլընտրանքային տարբերակների շուրջ խորհրդակցել իրավասու մարմինների հետ և կազմակերպել հանրության մասնակցությունը, • ըստ անհրաժեշտության, խորհրդակցել ազդակիր կողմերի հետ, • հիմնավորել մեթոդաբանությունների ընտրությունը և ներկայացնել դրանց սահմանափակումները

Շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա նշանակալի հնարավոր ազդեցությունների գնահատումն անհրաժեշտ է հնարավոր բնապահպանական ազդեցությունները վերլուծելու, դրանք որոշումների կայացման ընթացքում հաշվի առնելու, առկա այլընտրանքները համեմատելու և գնահատելու, հնարավոր համապատասխան մեղմացուցիչ միջոցներ նկատի ունենալու նպատակով: Արձանագրությունը նույն պահանջներն է ներկայացնում այլընտրանքային

տարբերակներին, ինչ պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի դեպքում: Հետևաբար, խորհուրդ է տրվում, որ բոլոր այլընտրանքները հավասարապես քննության առնվեն, պետք է համարել, որ ընդամենը մի շարք այլընտրանքներ կան, և ոչ թե՝ մի պլան կամ ծրագիր՝ գումարած մի շարք այլընտրանքային տարբերակներ: Հետևաբար, ցանկալի է նաև որ այլընտրանքները սկսեն հաշվի առնվել արդեն շրջանակների որոշման փուլում: Աղյուսակ 3 ներկայացնում է պլանի կամ ծրագրի և դրա խելամիտ այլընտրանքների կազմման գործընթացում լավագույն պրակտիկային նպաստող պարտադիր և լրացուցիչ՝ ոչ պարտադիր առաջադրանքները:
«
«Այլընտրանք» տերմինի սահմանումն Արձանագրությունում տրված չէ, սակայն այն մեկնաբանվում է որպես՝

- ի սկզբանե առաջարկված պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակ, որը, հնարավոր է, նույն նպատակներն է հետապնդում,
- որևիցե պլանի կամ ծրագրի բաղադրիչի այլընտրանքային տարբերակ, որը, հնարավոր է, նույն նպատակներն է հետապնդում:

Այլընտրանքային տարբերակների տեսակների շարքում կարող են ներառվել նաեւ այլընտրանքային վայրեր, հողի օգտագործման տեսակներ, տեխնոլոգիաներ, ժամկետներ, զարգացման ուղիներ կամ նույնիսկ նպատակների համախումբ: Այլընտրանքներում հարկավոր է հաշվի առնել նաև “ոչինչ չանելու” տարբերակը: Չնայած ոչ պարտադիր բնույթին, կարող է օգտակար լինել շրջակա միջավայրի տեսանկյունից լավագույն գործնական տարբերակի ընդգրկումը, ինչը հստակեցնում է ընտրության չափանիշները:

Այլընտրանքային տարբերակների մշակման հիմնական մեթոդներից են՝

- Հավաքական փորձագիտական եզրակացություններ, որոնք կարող են որոշել կամ մշակել հիմնական այլընտրանքները, օրինակ՝ սեմինարների կամ կոնֆերանսների միջոցով,
- Քարտեզների համախումբ և աշխարհագրական տեղեկատվական համակարգեր, որոնք կարող են նպաստել այլընտրանքների մշակմանն ու լավարկմանը՝ տարածական խնդիրների լուծման միջոցով,
- սցենարային տարբերակների մշակում, որոնք միջոցով հնարավոր է ներկայացնել հետագա զարգացման վրա ազդող տարբեր անորոշ գործոնների և շարժիչ ուժերի հետևանքով ստեղծվող հնարավոր տարբերակներ:

Անկախ ծագումից, բոլոր այս այլընտրանքները կարելի է վերլուծել և փոխադարձաբար համեմատել ըստ ազդեցությունների կամ պլանի և ծրագրի սահմանված նպատակների համապատասխանության: Այլընտրանքների վերլուծության և համեմատման գործիքները հիմնականում նույնն են, ինչ նկարագրվեց վերևում: Այնուամենայնիվ, կարելի է օգտագործել նաև ազդեցությունների, հակասությունների կամ սիներգիաների մատրիցները, որոնք ներկայացնում են առաջարկվող տարբերակների հիմնական բնապահպանական ազդեցությունները կամ բնապահպանական նպատակների հետ դրանց հիմնական հակասությունները կամ սիներգիաները, ինչպես նաև միտումների վերլուծությունը և էքստապոլյացիան:

Այլընտրանքների առողջության վրա ազդեցությունները պետք է գնահատվեն առնվազն համապատասխան առողջական որոշիչների վրա պլանի կամ ծրագրի դրական և բացասական հետևանքների տեսանկյունից և հիմնվելով այդ գնահատման վրա պետք է եզրակացության գալ պլանի կամ ծրագրի իրականացման դեպքում բնակչության առողջության համար բարվոք պայմանների ստեղծման հավանականության վերաբերյալ: Պետք է հիշել, որ առողջության վրա ազդեցությունները տատանվում են կոնկրետ և ուղղակի հետևանքներից մինչև բարեկեցությանն ու կյանքի որակին վերաբերող սուբյեկտիվ հետևանքներ: Պլանների և ծրագրերի առողջության վրա հավանական ազդեցությունների բացահայտմանը վերաբերող հարցերի օրինակները ներկայացված են Նյութատեխնիկական Ձեռնարկում:

Բնապահպանական հաշվետվության պատրաստում

Աղյուսակ 4 Բնապահպանական հաշվետվության/զեկույցի պատրաստում

Գործընթացային/պարտադիր առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
• Առաջարկել մշտադիտարկման ռեժիմ (Հավելված IV, պարբերություն 9), • բացահայտել և նկարագրել այլընտրանքային տարբերակների գնահատման ընթացքում ծագած դժվարությունները, սահմանափակումները, անորոշությունները և ռիսկերը, այդ թվում՝ պակասող տվյալները (Հավելված IV, պարբերություն 8), • բնապահպանական հաշվետվության պատրաստում (հոդված 7, պրբ. 1), հաշվետվությունը կառող է կազմված լինել համաձայն Հավելված IV դրությների, • կազմել տեղեկատվության ոչ տեխնիկական ամփոփագիր (Հավելված IV, պարբերություն 11)	• Մշտադիտարկման ռեժիմ առաջարկելիս փորձել լուծել պակասող տվյալների, տվյալների որակական ու քանակական խնդիրները • վերանայել ընտրված այլընտրանքային տարբերակները և բնապահպանական զեկույցը/հաշվետվությունը, • արձանագրել, թե ՌԲԳ ինչպես է ազդել նախատեսվող պլանի կամ ծրագրի և այլընտրանքային տարբերակների մշակման գործընթացների վրա • գրանցել պլանավորման և ՌԲԳ թիմերի շփումները • առաջարկել հետագա գործողություններ, այդ թվում՝ ներկայացնել առաջարկներ այլ պլանների, ծրագրերի կամ նախագծերի վերաբերյալ:

Բնապահպանական զեկույցը պետք է ներառի գործընթացում հավաքված ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ոչ տեխնիկական ամփոփագիրը: Այն պետք է ունենա բավարար որակ, ներկայացնի Արձանագրության դրույթներին համահունչ ամբողջական և վստահելի տեղեկատվություն: Աղյուսակ 4 ներկայացնում է այս ոլորտում լավագույն պրակտիկային նպաստող պարտադիր և լրացուցիչ՝ ոչ պարտադիր առաջադրանքները: Որակի ապահովման պատասխանատվությունը կախված կլինի տվյալ երկրում գործող ինստիտուցիոնալ պայմանավորվածություններից:

Բնապահպանական զեկույցը պատրաստող մարմինը պաքտասխանատու կլինի դրա որակի ապահովման համար: Ուղենիշների մշակման համար պատասխանատու մարմինը կարող է ստանձնել որակի վերահսկման առաջադրանքը, կամ էլ այդ գործառույթը կարելի է կազմակերպել անկախ հանձնաժողով կազմելու կամ գործող աուդիտային հանձնաժողովի իրավասությունների երկարաձգման միջոցով: Նյութատեխնիկական Ձեռնարկում (Աղյուսակ Ա4.4) ներկայացված Որակի ապահովման նմուշային ստուգացուցակը կարող է օգտակար լինել ՌԲԳ գործընթացի որակի ստուգման համար:

Անկախ ինստիտուցիոնալ պայմանավորվածություններից, պատասխանատու մարմինը պետք է որոշի, թե արդյոք բնապահպանական զեկույցն ունի բավարար որակ՝ կիրառելով Արձանագրության հոդված 7-ի և Հավելված IV-ի չափանիշները: Եթե զեկույցը բավարար որակ չունի, ապա այն կարող է փոփոխվել կամ լրացվել, կամ էլ ՌԲԳ-ի մի մասը կրկրնվել, կախված ազգային ՌԲԳ համակարգերից:

Խորհրդակցում

Աղյուսակ 5 **Խորհրդակցում**

Գործընթացային/պարտադիր առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
• Հաստատել հանրության շահագրգիռ ներկայացուցիչներին այդ թվում՝ համապատասխան ՀԿ-ներին (եթե արդեն չի	• Նկարագրել խորհրդակցությունների և հանրության մասնակցության գործընթացները,

արվել) (հոդված 8.3), • բնապահպանական զեկույցը ներկայացնել իրավասու մարմիններին և հանրությանը (հոդված 8, պրբ. 2, հոդված 9, պրբ. 2), • պաշտոնապես ծանուցել ազդակիր կողմերին (հոդված 10), • բնապահպանական զեկույցի և դրա այլընտրանքային տարբերակների շուրջ խորհրդակցել իրավասու մարմնների հետ և կազմակերպել հանրության մասնակցությունը, • ըստ անհրաժեշտության, խորհրդակցել ազդակիր կողմերի հետ, • ընդունել որոշումների կայացման գործընթացում հաշվի առնվող կարծիքները • զեկույցը պաշտոնապես հանձնել որոշումներ կայացնող մարմնին (հոդված 11)	• գրանցել, թե ովքեր են ընդգրկվել «հանրություն» և «հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ» հասկացությունների շրջանակներում

Խորհրդակցությունները և հանրության մասնակցությունը պետք է կազմակերպվեն այս փուլում, իրավասու մարմինները և շահագրգիռ հանրությունը պետք է ներկայացնեն իրենց կարծիքը/դիտողությունները հաշվետվության և նախագիծ պլանի կամ ծրագրի այլընտրանքների վերաբերյալ: Նրանց դիտողությունները պետք է հաշվի առնվեն և համապատասխանաբար արձանագրվեն: Աղյուսակ 5-ը ներկայացնում է այս փուլում լավագույն պրակտիկային համապատասխանող պարտադիր և լրացուցիչ՝ ոչ պարտադիր առաջադրանքների ցանկը: Հաջորդող երկու հատվածները Գ և Դ, նկարագրում են, թե ինչպես պետք է իրականացվեն հանրության մասնակցության և իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների Արձանագրության դրույթները:

Եթե հավանական են անդրսահմանային ազդեցությունների ի հայտ գալը, ապա անդրսահմանային խորհրդակցությունները պետք է սկսվեն այս փուլում: Ազդեցություն կրող Կողմը նույնպես կարող է հանդես խորհրդակցությունները սկսելու խնդրանքով (տե՛ս հատված 4.5 ստորև):

Վերջապես, հաշվետվությունը և պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակները անհրաժեշտության դեպքում կարելի է փոփոխել մինչև որոշում կայացնողներին ներկայացնելը՝ հաշվի առնելով ստացված դիտողությունները:

4.3 Հանրության մասնակցություն

Հիմնական դրույթներ

Հոդված 8-ը պահանջում է, որ հանրությանը պլանների և ծրագրերի ՌԲԳ-ներին մասնակցելու արդյունավետ հնարավորություններ ընձեռվեն գործընթացի վաղ փուլերում, երբ բոլոր տարբերակները դեռևս բաց են (հոդված 8 պրբ.1): Պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական հաշվետվության հանրային մատչելիության ապահովումը պարտադիր է (հոդված 8 պրբ . 2):

Հարկավոր է սահմանել **հանրության շահագրգիռ ներկայացուցիչների,** այդ թվում՝ համապատասխան ՀԿ-ների շրջանակը (հոդված 8 պրբ. 3): Հանրության շահագրգիռ ներկայացուցիչները, և ոչ թե լայն հասարակայնությունն ընդհանրապես, պետք է հնարավորություն ունենան պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքները ներկայացնել խելամիտ ժամկետում (հոդված 8 պրբ. 4):
Հանրությանը իրազեկելու և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հետ խորհրդակցելու մանրամասն պայմանավորվածությունները պետք է ճշտվեն և ներկայացվեն հանրությանը (հոդված 8 պրբ. 5): Այս պայմանավորվածությունները պետք է համապատասխանեն Հավելված V-ում սահմանված դրույթներին:

Բացի այդ, Արձանագրությունը ոչ պարտադիր կարգով սահմանում է վաղ փուլերում հանրության մասնակցության մոտեցումը, մասնավորապես շրջանակների որոշման (հոդված 6) փուլում, նաև ՌԲԳ անհրաժեշտության որոշման փուլում՝ երբ գնահատվում են նշանակալի ազդեցությունները (հոդված 5):
Արձանագրությունը հանրությանը վերապահում է մի շարք ընդհանուր իրավունքներ՝ ի լրումն պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն ստանալու և դրանց շուրջ խորհրդակցելու իրավունքների:
Այս ընդհանուր իրավունքներն սահմանվում են Հոդված 3-ում և ներառում են պաշտոնյաների և իրավասու մարմինների կողմից համապատասխան աջակցությունն և ուղղորդումը, համապատասխան ընկերակցությունների, կազմակերպությունների կամ խմբերի (օրինակ՝ ՀԿ-ների) ճանաչումը և նրանց աջակցության տրամադրումը, Արձանագրությամբ նրանց վերապահված իրավունքների կիրառումը:

Հանրության սահմանումը

Արձանագրությունը տարբերակում է “հանրություն” (ընդհանուր իմաստով) հասկացությունը, որը պետք է իրազեկվի, և “շահագրգիռ հանրության” հասկացությունը, որը հնարավորություն ունի արտահայտելու իր կարծիքը պլանի, ծրագրի նախագծերի և բնապահպանական հաշվետվության վերաբերյալ: Շահագրգիռ հանրությունը սահմանված չէ Արձանագրությունում, բացառությամբ այն դրույթի, որ այն պետք է ներկայացվի համապատասխան ՀԿ-ների միջոցով: Հետևելով «Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին» կոնվենցիայի սահմանմանը (Օրհուսի կոնվենցիա), “շահագրգիռ հանրությունը” կարող է մեկնաբանվել որպես հանրության այն հատվածը, որը մասնակի կամ ամբողջական ազդեցության կենթարկվի, կամ էլ որի շահերը շոշափվում են բնապահպանական բնույթի որոշումների արդյունքում: Ակնհայտ է, որ շահագրգիռ հանրությունը, ներառյալ համապատասխան ՀԿ-ները, տարբեր պլանների կամ ծրագրերի դեպքում տաբբեր կարող են լինել:

Գործնական նկատառումներ

Հանրային մասնակցության գործընթացը պետք է ծառայի տեղեկատվություն տրամադրման, դիտողությունների ստացման և խնդիրների լուծմանը շահագրգիռ հանրության ներգրավման նպատակներին: Արձանագրությունը պահանջում է, որ հանրությանը մասնակցության հնարավորություն ընձեռվի այն ժամանակ, «երբ բոլոր տարբերակները բաց են», այսինքն, մի փուլում, երբ հնարավոր է խելամիտ այլընտրանքային տարբերակներից ընտրել և լավագույն տարբերակը ընդունել կամ օրենքով սահմանված կարգով ներկայացնել հաստատման:

Հանրությանը տեղեկատվությամբ ապահովելու համար անհրաժեշտ է օգտվել տեղեկատվության հրապարակման և մատչելիության ապահովման համապատասխան մեխանիզմներից, թեև Արձանագրությամբ միայն ներկայացվում է տեղեկատվությունը հանրությանը մատչելի դարձնելու պահանջ: Տեղեկատվության արդյունավետ տարածում կարելի է կազմակերպել հանրային ծանուցման միջոցներով (օրինակ՝ թերթերում տեղադրված ծանուցագրեր) կամ անհատական ծանուցման միջոցով (օրինակ՝ անհատական էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկում): Առավել ընդունված տարբերակներ են համարվում տպագիր նյութերը, ուսումնասիրությունները, խորհրդակցությունները, հանրային լսումները, տեղեկատվական լրահոսերը և ցուցադրական նյութերը: Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ին հանրային մասնակցության մեկ օրինակը կարող է պարզեցնել այդ ընթացակարգը:

Արձանագրությունում հստակորեն նշվում է էլեկտրոնային լրատվամիջոցներից օգտվելու մասին, որոնք դիտվում են որպես հանրությանը տարբեր փաստաթղթերի մասին ժամանակին տեղեկատվություն տրամադրելու միջոց: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հանրության մասնակցության արդյունավետ հնարավորությունների ընձեռման անհրաժեշտությունը, ընդամենը հաղորդակցման էլեկտրոնային միջոցներով փաստաթղթերի տարածումը կարող է բավարար չհամարվել, քանի որ բացառում է հանրության մի շարք կարևոր հատվածների, օրինակ, ընչազուրկ,

մեկուսացված (օրինակ՝ գյուղական) վայրերում բնակվող կամ համացանցից չօգտվող տարեց անձանց մասնակցությունը:

Կախված պլանի կամ ծրագրի տեսակից ու բարդության աստիճանից՝կարող են սահմանվել հանրության մասնակցության տարբեր ժամկետներ, սակայն պետք է ուշադիր լինել և միջոցներ ձեռնարկել, որպեսզի բավարար ժամանակ նախատեսվի հիմնավոր կարծիք ձևավորելու համար: Անհրաժեշտ է նաև բավարար ժամանակ տրամադրել պլանավորող մարմնին՝ ներկայացված տեսակետները պլանի կամ ծրագրի ընդունումից առաջ ուսումնասիրելու համար: Երբեմն ներկայացվում են լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պահանջներ, հանրության մասնակցության համար նախատեսվող ժամկետները որոշելիս հարկավոր է հաշվի առնել պատասխանատու մարմնի կողմից պատասխաններ ներկայացնելու համար պահանջվող ժամանակահատվածը[2]:

4.4 Խորհրդակցություններ իրավասու մարմինների հետ

Հիմնական դրույթներ

Հոդված 9-ը պահանջում է, որ բնապահպանության և առողջապահության իրավասու մարմիններին գործընթացի վաղ փուլերում արդյունավետ հնարավորություն տրվի պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու համար (հոդված 9 պրբ. 3): Հարկավոր է որոշել, թե բնապահպանական և առողջապահական ո՞ր մարմինները պետք է մասնակցեն խորհրդակցություններին (հոդված 9 պրբ. 1), նաև անհրաժեշտ է սահմանել տեղեկացման և խորհրդակցությունների վարման մանրամասն մեխանիզմը (հոդված 9 պրբ. 4):

Բնապահպանության և առողջապահության մարմինների հետ խորհրդակցություններ նախատեսվում են ՌԲԳ-ի տարբեր փուլերում՝

- զգալի ազդեցությունների բացահայտում, եթե ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելիս նման պահանջ է ներկայացվում (հոդված 5 պրբ. 2),
- շրջանակների որոշում (հոդված 6 պրբ. 2),
- բնապահպանական զեկույց (հոդված 9 պրբ. 3):

Գործնական նկատառումներ

«Իրավասու մարմիններ» հասկացությունը ներառում է վարչական կամ իրավական պահանջների համաձայն սահմանված պաշտոնական պետական և հանրային մարմինները: Դրանց թվում կարող են լինել բնապահպանական կամ շրջակա միջավայրի ու առողջապահության տեսչություններ (ազգային, տարածքային կամ տեղական մակարդակներում), բնապահպանության կամ առողջապահության գիտահետազոտական հաստատություններ, որոնք հանրային գործառույթ են իրականացնում կամ կառավարության օղակներ են (ազգային, տարածքային կամ տեղական), որոնք կարող են հետաքրքքված լինել խնդրո առարկա պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր հետևանքներով կամ տիրապետել համապատասխան փորձագիտական գիտելիքների[3]:

Բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցությունը ՌԲԳ շրջանակներում առողջության հարցերի քննարկման հիմքն է: Պլանավորող և առողջապահական իրավասու մարմինների միջև համագործակցությունը խթանելու համար օգտավետ կլինի տեղեկատվության փոխանակումը և աստիճանաբար համաձայնության գալը ստորև նշվող հարցերի շուրջ՝

- առողջության որոշիչներ, որոնք տարբեր տեսակի պլանների կամ ծրագրերի իրականացման արդյունքում կարող են ենթակա լինել նշանակալի ազդեցությունների,

[2] Փոփոխված տարբերակ, որը վերցված էԵվրոպական հանձնաժողովի «*Շրջակա միջավայրի վրա որոշակի պլանների և ծրագրերի ազդեցությունների գնահատման մասինհրահանգ 2001/42/EC-ի իրականացում*» հրատարակությունից, պրբ. 7.10, այսուհետ՝ ԵՀ Ուղեցույց:

[3] ԵՀ Ուղեցույց, պրբ 7.11

- առողջության որոշիչների և համապատասխան առողջական հետևանքների միջև պատճառահետևանքային կապեր,
- առողջության վրա բացասական ազդեցությունների կանխմանը, նվազեցմանը կամ մեղմմանը նպատակաուղղված գործողություններ,
- տարբեր պլանների և ծրագրերի իրականացման ընթացքում փաստացի առողջական հետևանքների մշտադիտարկման պայմանավորվածություններ:

Պատասխանատու մարմինների «նշանակումը» կարող է կատարվել ընդհանուր ձևով՝ Արձանագրության կիրառման օրենքում համապատասխան դրույթներ ամրագրելու միջոցով: Օրինակ, ազգային բնապահպանական գերատեսչությունը կարող է իրավասու մարմին նշանակվել անխտիր բոլոր դեպքերի կամ աշխատանքների սահմանված տեսակների քննման համար: Իրավասու մարմինները կարող են նաև նշանակվել անհատական քննվող գործի վերաբերյալ որոշմամբ, եթե Արձանագրությունը կիրառող օրենքում կան նշանակման նման տարբերակ թույլատրող համապատասխան դրույթներ[4]:

4.5 Անդրսահմանային խորհրդակցություններ

Հիմնական դրույթներ

Հոդված 10-ով անդրսահմանային խորհրդակցություններ են նախատեսվում այն դեպքում, երբ մի երկրում (ծագման երկիր) նախատեսվող պլանը կամ ծրագիրը կարող է զգալի բնապահպանական հետևանքներ առաջացնել մեկ այլ երկրի տարածքում (ազդեցության ենթարկվող՝ ազդակիր երկիր):

Պլանի կամ ծրագրի ծագման երկիրը պետք է տեղեկացնի ազդակիր երկրին, եթե գտնում է, որ առաջարկվող պլանի կամ ծրագրի իրականացումը կարող է էական անդրսահմանային բնապահպանական հետևանքների հանգեցնել, կամ եթե հարցում է ստանում զգալի բնապահպանական ազդեցությունների ենթակա որևէ երկրից (հոդված 10.1): Հետևաբար, առաջին քայլը պետք է լինի ճշտել, թե նախատեսվող պլանը կամ ծրագիրը զգալի անդրսահմանային բնապահպանական հետևանքներ կարող է ունենալ, թե ոչ:

Արձանագրությունում հստակ սահմանված չէ, թե անդրսահմանային ծանուցագիրը և խորհրդակցությունները ո՞ր փուլում պետք է նախաձեռնվեն, այն պարզապես պահանջում է, որ ծանուցագիրը «ներկայացվի հնարավորինս շուտ՝ նախքան պլանի կամ ծրագրի ընդունումը» (հոդված 10 պրբ. 1): Ծանուցագիրը պետք է ներառի պլանի կամ ծրագրի նախագիծը, բնապահպանական զեկույցը, որը ներառում է հնարավոր անդրսահմանային բնապահպանական հետևանքների մասին տեղեկատվություն, և տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ կարծիքների ներկայացման ժամանակացույցը (հոդված 10 պրբ.2):

Ազդակիր երկրի կողմից համաձայնության կամ համապատասխան պահանջի դեպքում այնուհետև կազմակերպվում են խորհրդակցություններ: Խորհրդակցությունների շրջանակներում քննարկվում են պլանի կամ ծրագրի իրականացման դեպքում հնարավոր անդրսահմանային բնապահպանական հետևանքները (հոդված 10 պրբ. 3), բացասական հետևանքների կանխմանը, նվազեցմանը կամ մեղմացմանն ուղղված գործողությունները (հոդված 10 պրբ.3), ազդակիր երկրի համապատասխան իրավասու մարմիններին և **հանրության ներկայացուցիչներին** տեղեկացնելու և պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի/հաշվետվության շուրջ իրենց կարծքիները ներկայացնելու մասին մանրամասն պայմանավորվածություններ (հոդված 10 պրբ.4):

Ազդակիր երկրի բնապահպանության ու առողջապահության իրավասու մարմինների և հանրության կարծիքները պետք է հաշվի առնվեն, նրանք պետք է տեղեկացվեն, թե իրենց կարծիքներն ինչպես են հաշվի առնվել (հոդված 11):

[4] ԵՀ Ուղեցույց, պրբ 7.13—7.14

Գործնական նկատառումներ[5]

Անդրսահմանային ազդեցություններն ամենաուշը պետք է առանձնացվեն բնապահպանական զեկույցի նախապատրաստման ընթացքում, բայց դրանք ավելի վաղ փուլում բացահայտելու դեպքում ծանուցումը նույնպես պետք է **շրջանակների որոշման** ավելի վաղ փուլում ներկայացվի: Այս ձևով հնարավոր է նվազեցնել որոշումների կայացման փուլում տարբեր ձգձգումների հավանականությունը: Բայցևայնպես, ծանուցման ֆորմալ պատասխանը ազդեցություն կրող երկրի կողմից պետք է ավելի ուշ ներկայացվի, հիմնվելով ծագման երկրի կողմից բնապահպանական հաշվետվության և պլանի կամ ծրագրի նախագծերի վերջնական ամփոփված տարբերակների վրա: Արձանագրությունը պահանջում է, որ անդրսահմանային խորհրդակցությունների համար **խելամիտ ժամանակացույց** նախատեսվի: Եթե համեմատենք ոչ անդրսահմանային իրավիճակների հետ, ապա բավարար ժամանակ է պետք նախատեսել համապատասխան կողմերի միջև կապի հաստատման, ազդակիր երկրի համապատասխան իրավասու մարմինների ու հանրության շահագրգիռ անձանց հաստատման, նրանց հետ խորհրդակցությունների կազմակերպման, պլանի կամ ծրագրի ծագման երկրի համապատասխան իրավասու մարմինների կողմից անդրսահմանային խորհրդակցությունների արդյունքում ստացված կարծիքների քննարկման ու ամփոփման համար: Տարբեր գործնական հարցեր, օրինակ՝ փաստաթղթերի թարգմանությունը, իրենց հերթին կարող են երկարաձգել այս գործընթացը:

Անդրսահմանային մեխանիզմը մեկնարկելու դեպքում համապատասխան կողմերը պետք է ամենայն մանրամասնությամբ ձևակերպված պայմանավորվածությունների շուրջ համաձայնության գան՝ ապահովելով հասարակության շահագրգիռ անձանց և ազդակիր երկրի բնապահպանական ու առողջապահական իրավասու մարմինների հետ անհրաժեշտ խորհրդակցությունների կազմակերպումը:

Անդրսահմանային խորհրդակցությունները (ինչպես նաև համապատասխան կողմերի ծանուցումը) կարող են կազմակերպվել տարբերայնորեն՝ըստ անհրաժեշտության: Այնուամենայնիվ, անդրսահմանային համատեքստում (Էսպուի կոնվենցիայի համաձայն) ՇՄԱԳ-ի իրականացման փորձը վկայում է, որ այս գործընթացը հնարավոր է արագացնել և պարզեցնել երկկողմ կամ բազմակողմանի համաձայնագրերի ստորագրման միջոցով, որոնցով ամրագրվում է անդրսահմանային խորհրդակցությունների շրջանակը և սահմանվում են համապատասխան պարամետրերը, այդ թվում՝ կապ պաշտպանող անձինք և շփման ժամանակացույցը, համատեղ մարմինը, փաստաթղթերի թարգմանության կազմակերպումը, ծախսերի հաշվեգրումը, հետևանքների կարևորության չափանիշները, հանրության մասնակցության կազմակերպումը և վեճերի կարգավորման արձանագրությունները: Էսպուի կոնվենցիային կից «Օրինակելի կիրառույթի և երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի ուղեցույցը» (ECE/MP.EIA/6, հավելված IV) այս հարցերի վերաբերյալ խորհուրդներ է պարունակում: Էսպուի կոնվենցիայի շրջանակներում ստորագրված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը, որոնք պլանների և ծրագրերի ընդգրկման դեպքում պահանջվող համապատասխան փոփոխությունների են ենթարկվել, կարող են նման պայմանավորվածությունների հիմք ծառայել:

4.6 Որոշումների կայացում

Հիմնական դրույթներ

Որոշում կայացնող մարմինը որոշում է, թե պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակներից (եթե կան այդպիսիք), կամ պլանի կամ ծրագրի այլընտրանքային բաղադրիչներից, որը պետք է հաստատվի (հոդված 11)։ Որևէ պլան կամ ծրագիր ընդունելիս որոշում կայացնող մարմինը պետք է հաշվի առնի բնապահպանական զեկույցի եզրակացությունները, այդ թվում՝ պլանի կամ ծրագրի տարբեր այլընտրանքների բացասական հետևանքների կանխմանը, նվազեցմանը և մեղմացմանն ուղղված գործողությունները:

[5] Այս հատվածը հիմնված է ԵՀ Ուղեցույցի 7.26—7.29 պարբերությունների վրա:

Որոշում կայացնող մարմինը պետք է նաև հաշվի առնի բնապահպանության և առողջապահության համապատասխան մարմինների, հանրության շահագրգիռ ներկայացուցիչների և ազդեցության ենթարկված յուրաքանչյուր երկրի հնչեցրած կարծիքները (հոդված 11.1):

Պլանի կամ ծրագրի հաստատումից հետո համապատասխան բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինները, լայն հասարակայնությունը (ոչ միայն հասարակության շահագրգիռ անձինք) և ազդեցության ենթարկվող երկրները պետք է ծանուցվեն ընդունված որոշման մասին (հոդված 11 պրբ. 2):

Ընդունված պլանը կամ ծրագիրը նրանց պետք է ներկայացվի ուղեկցող փաստաթղթով, որը՝

- ամփոփում է, թե ինչպես են ընդունված պլանում կամ ծրագրում ընդգրկվել բնապահպանական և առողջապահական նկատառումները (ինչպես դրանք ներկայացված են բնապահպանական զեկույցում),
- ամփոփ ներկայացնում է, թե արտահայտած կարծիքները (հանրության դեպքում հասարակության շահագրգիռ անձանց արտահայտած կարծիքները) ինչպես են հաշվի առնվել,
- համառոտ ներկայացնում է քննարկված խելամիտ այլընտանքներից պլանի կամ ծրագրի տվյալ տարբերակի ընտրության հիմնավորումը:

Գործնական նկատառումներ

Պլանը կամ ծրագիրն ընդունելիս որոշումներ կայացնողները մասնավորապես պետք է հաշվի առնեն՝

- պլանի կամ ծրագրի նպատակների և բնապահպանական նպատակների համատեղելիությունը
- բնապահպանական մնացորդային հետևանքները:

Հասարակության ծանուցումը և գրավոր փաստաթղթում ընդգրկվող տեղեկատվությունը համեմատելի են Օրհուսի կոնվենցիայի պահանջների հետ: Այս տեղեկատվության գաղտնիության պահպանման մասին ոչ մի դրույթ չի սահմանվում: Իրավասու մարմինները պետք է բավարար տեղեկատվություն տրամադրեն այն մասին, թե շրջակա միջավայրի տվյալներն ինչ պայմանով են ներկայացվում և ինչպես են ձեռք բերվել: Այս տեղեկատվությունը կարող է մատուցվել տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ տեղեկատվական հրապարակումների, կառավարական հրապարակումներում կամ կայքերում զետեղված հայտարարությունների, հանրային հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների կամ համապատասխան տեղեկությունները ձեռք բերելու ուղիները մանրամասնող բնապահպանական տեղեկատվության կատալոգների միջոցով[6]:

4.7 Մշտադիտարկում / մոնիտորինգ

Հիմնական դրույթներ

Հոդված 12-ով նախատեսվում է ընդունված պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների մշտադիտարկում, սակայն հոդվածը չի սահմանում թե այն ինչպես պետք է իրականցվի: Արձանագրությունը պահանջում է, որ մշտադիտարկման արդյունքները պետք է հասանելի լինեն հանրությանը, համապատասխան բնապահպանական և առողջապահական մարմիններին (հոդված 2, պրբ. 2): Մշտադիտարկման հիմնական հիմնավորումը, ի թիվս այլ գործոնների, շրջակա միջավայրի վրա չնախատեսված վնասակար հետևանքների բացահայտումն է և դրան ի պատասխան համապատասխան միջոցների նախաձեռնումը (հոդված 12, պրբ. 1):

Գործնական նկատառումներ

Ի լրումն վերոնշյալի, մշտադիտարկումը կարող է ապահովել այլ առավելություններ: Այսպիսով, մշտադիտարկման շնորհիվ հնարավոր է՝

[6] ԵՀ Ուղեցույց, պրբ 7.31

- հետևել, որ պլանը կամ ծրագիրն իրականացվի նախատեսված ձևով, այդ թվում՝ իրականացվեն շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների կանխման, նվազեցման կամ մեղմացման նախատեսված գործողությունները,
- հետևել, որ պատասխանատու մարմինների կողմից սահմանված բնապահպանական պայմանների խախտում չի թույլ տրվել,
- համեմատել նախատեսված և փաստացի հետևանքները՝ ներկայացնելով պլանի կամ ծրագրի իրականացման մասին տեղեկատվություն,
- ձորձառություն կուտակել հետագա ՌԲԳ-ների բարելավման համար (այսինքն՝ որակի ապահովման գործիք):

Մշտադիտարկման բնույթը կարող է տարբերվել ըստ նախատեսվող պլանների և ծրագրերի տեսակների: Առաջարկվում է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք լիարժեք մշակված են և նպատակահարմար են նախատեսված պլանը կամ ծրագիրը իրականացնելու ընթացքում բնապահպանական զեկույցում ընդգրկված ենթադրություններն ու կանխատեսումները գրանցված ազդեցությունների հետ համեմատելու համար: Կարևոր է հաշվի առնել, թե արդյո՞ք ընտրված մեթոդները պլանի կամ ծրագրի անկանխատեսելի բացասական էական հետևանքների վաղ նախազգուշացման վստահելի մեխանիզմ են ապահովում, թե ոչ, որպեսզի ժամանակին համապատասխան գործողություններ ձեռնարկվեն:

Թեև պահանջվում է բացահայտել **անկանխատեսելի** բացասական հետևանքները, սակայն մշտադիտարկումը կարելի է նախատեսել բնապահպանական զեկույցում նշված համապատասխան նշանակալի բնապահպանական ազդեցությունների հիման վրա: «անկանխատեսելի» որակումը կարող է վերաբերել անկանխատեսելի հետևանքների ուժգնությանը կամ լարմանը, օրինակ, էներգետիկ սեկտորի պլանի իրականացման արդյունքում նախատեսվածից ավելի մեծ չափով փոփոխությունների գրանցում ծծմբի երկօքսիդի արտանետումների ցուցանիշներում: Մշտադիտարկման ծրագրում կարելի է ընդգրկել նաև այնպիսի բաղադրիչներ, որոնց օգնությամբ հնարավոր լինի բացահայտել իսկապես անկանխատեսելի հետևանքները:

Օրինակ, պատահական ընտրանքի միջոցով բնապահպանական պարամետրերի լայն շարքի պարբերական վերլուծությունը կարող է բացահայտել որևիցե պարամետրի փոփոխություն, որն ըստ նախատեսված պլանի կամ ծրագրի, ազդեցության չպետք է ենթարկվեր:
Արձանագրությունում չի քննարկվում, թե անկանխատեսելի բացասական ազդեցություններ գրանցելու դեպքում ինչ **շտկիչ միջոցառումներ** պետք է ձեռնարկվեն: Եթե այս պատճառով պլանը կամ ծրագիրը փոփոխելու անհրաժեշտություն է ծագում, ապա հնարավոր է նոր ՌԲԳ անհրաժեշտություն առաջանա՝Արձանագրության 2-րդ և 4–րդ հոդվածների պահանջները բավարարելու համար:

Եվ վերջապես, մշտադիտարկման ենթակա էական ազդեցությունների շարքում կարող են լինել անդրսահմանային ազդեցությունները: Նախագծի ավարտից հետո վերլուծություն իրականացնելու Էսպուի կոնվենցիայում ամրագրված պահանջը (հոդված 7) նման ազդեցությունները դիտարկելու հիմք կարող է ծառայել: Թեև մշտադիտարկման արդյունքները համապատասխան երկրին ներկայացնելու պահանջ չի դրվում, սակայն դրանք պետք է հանրային ոլորտում լինեն, իսկ տվյալ երկրի տարածքում մշտադիտարկում կազմակերպելու համար հարկավոր է դիմել այդ երկրի աջակցությանը:

Գլուխ 5

Քաղաքականություն և օրենսդրություն

Այս գլուխը քննարկում է քաղաքականություններին և օրենսդրությանը վերաբերող Արձանագրության հոդված 13: The emphasis is on applying “principles and elements” of the Protocol, rather than an SEA process similar to that for plans and programmes.

5.1 Հիմնական դրույթներ

Հոդված 13-ը պահանջում է, որ կողմերը «ձգտեն», «փորձեն» հետևել, որ շրջակա միջավայրին առչվող մտահոգությունները քննարկվեն և ինչպես հարկն է ընդգրկվեն քաղաքականության և օրենսդրության նախագծերի կազմման գործընթացում՝ համաձայն Արձանագրության համապատասխան սկզբունքների և տարրերի պահանջների: Հոդված 13-ը նաև սահմանում է, որ յուրաքանչյուր Կողմ համապատասխան դեպքերում պետք է որոշի առկա մտահոգությունները քաղաքականության և օրենսդրության նախագծերի կազմման գործընթացի շրջանակներում քննարկելու և այդ գործընթացում ընդգրկելու համար անհրաժեշտ պայմանավորվածությունները: Հոդված 13-ի պահանջների կատարման շրջանակներում պետք է հետևել, որ գործնական պայմանավորվածություններն ապահովեն որոշումների ընդունման թափանցիկություն: Բացի այդ, սույն հոդվածով Կողմերին պահանջ է ներկայացվում դրա կիրառման վերաբերյալ զեկուցել Կողմերի համաժողովի շրջանակներում:

Արձանագրությունում «քաղաքականության և օրենսդրության» արտահայտության սահմանումը չի տրվում, սակայն, որպես կանոն, քաղաքականությունները հիմնականում համարվում են պլանների և ծրագրերի մակարդակից ավելի բարձր և առավել ընդհանուր բնույթի ռազմավարական առաջարկներ: Հոդված 13-ում նշվում է, որ Հոդված 13-ին ենթակա են այն քաղաքականություններն ու օրենքները, որոնք շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություններ կարող են ունենալ:

5.2 Հնարավոր մոտեցումներ

Քաղաքականությունների և օրենքների նկատմամբ պարտադիր կարգով ՌԲԳ կիրառելու պահանջի բացակայությունը Կողմերին հնարավորություն է ընձեռում քաղաքականությունների և օրենքների մշակման գործընթացում շրջակա միջավայրերի քննարկման և ընդգրկման հարցում ճկուն մոտեցում ցուցաբերել, ձեռնարկել փորձնական ուսումնասիրություններ և աստիճանաբար կուտակել համապատասխան փորձ ու հմտություններ:

Այնուամենայնիվ, բնապահպանական հարցերի քննարկման և ինտեգրման գործընթացին վերաբերող Արձանագրության դրույթների հիմնական առանձնահատկություններից կարելի է առանձնացնել երկուսը՝ **ինտեգրման** (հոդված 1 (բ) և (ե)) և **թափանցիկության** ապահովման (հոդված 13 պրբ. 3) անհրաժեշտությունը: Ինտեգրումը պահանջում է բնապահպանական հարցերին առնչվող հարցերը հաշվի առնելով և ներառել քաղաքանության և օրենսդրության մշակման գործընթացների վաղ փուլերում: Քաղաքականության կամ օրենսդրության և բնապահպանական նպատակների այս համադրումը կարող է հանդիսանալ ինտեգրման հործընթացի արդյունաբետ մեկնակետ:

Բնապահպանական հարցերն առավել արդյունավետ ինտեգրելու համար անհրաժեշտ է՝

- դրանք նախաձեռնել վաղ փուլում՝ մինչև վերջնական որոշումների կայացումը,
- քաղաքականությունը կամ օրինագիծը մշակող խմբում ընդգրկել բնապահպանական հարցերին նախանձախնդիր անձանց,

- խմբում և որոշում կայացնող մարմինների հետ համաձայնեցնել, թե բնապահպանական հարցերի քննարկման և ինտեգրման գործընթացի, այդ թվում՝ բնապահպանական գնահատման արդյունքներն ինչպես են օգտագործվելու,
- քննարկման և ինտեգրման գործընթացը հարմարեցնել քաղաքականության կամ օրենքի մշակման գործընթացին, հատկապես դրա ժամանակացույցին,
- շրջակա միջավայրի վերաբերյալ մտահոգությունների շուրջ քննարկումներում ընդգրկել բնապահպանական գնահատման սկզբունքներն ու տարրերը,
- ապահովել թափանցիկություն՝ բնապահպանական հարցերը քաղաքականության կամ օրենքի մշակման գործընթացում ընդգրկելու գործում:

Թափանցիկություն կարելի ապահովել տարբեր միջոցներով, այդ թվում՝

- Արդյունքների և հիմնավորումների ներկայացում հանրությանը (այն է՝ ինչու է տվյալ քաղաքականությունը կամ օրենքն ընդունվել՝ նկատի ունենալով բնապահպանական մտահոգությունները)
- Հանրության իրազեկում քաղաքականության կամ օրենքի մշակման գործընթացի վաղ փուլերում, ներկայացված կարծիքների քննարկում և ընդգրկում, ինչպես նաև այս գործողությունների ընթացքի մասին հանրության ծանուցում
- Քաղաքականության կամ օրենքի հնարավոր բնապահպանական ազդեցությունների հարցերի շուրջ բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցություններ գործընթացի վաղ փուլերում
- Գործընթացի վաղ փուլերում հանրության՝ ոչ միայն համապատասխան ՀԿ-ների, այլև համապատասխան դեպքերում լայն հասարակայնության և Արձանագրությունն ընդունած այլ երկրների համապատասխան մարմինների ներգրավում:

Հարկավոր է նաև հաշվի առնել պլանների և ծրագրերի կազմմանը վերաբերող 4-12-րդ հոդվածների դրույթներով ամրագրված բաղադրիչները (այն է՝ հոդված 13.2-ում նշվող «սկզբունքները և տարրերը»), որոնք ներառում են կիրառման ոլորտը և նշանակալի ազդեցությունների որոշումը, շրջանակների որոշումը և բնապահպանական զեկույցը, հանրության մասնակցությունը, խորհրդակցությունները բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ և անդրսահմանային խորհրդակցությունները, որոշումների կայացումը և մշտադիտարկումը: